ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2020թվականի N 184

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ.փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի բնակչուհի Զվարդ Աղեկյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակչուհի Զվարդ Աղեկյանին, ամուսնու՝ Գագիկ Հունանյանի թաղման ծախսերը հոգալու նպատակով:
2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար Գ.Մաթևոսյան

09.09.2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 185

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ինմասի 24-րդկետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճն համայնքի ավագանու 2017թ.փետրվարի 20-ի <<Նոր Հաճն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N6-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով համայնքի բնակչուհի Հայկանուշ Վլադիմիրի Ոսկանյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2020 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակչուհի ՀայկանուշՎլադիմիրիՈսկանյանին, հորեղբոր՝ Վազգեն Ոսկանյանի հուղարկավորության ծախսերը հոգալու նպատակով:

2. Հանձնարարել համայնքապետարանի գլխավոր հաշվապահին՝ ապահովելու ֆինանսավորումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ 15
ք.Նոր Հաճն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 186

ՆՈՐ ՀԱՃՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով < Բյուջետային համակարգի մասին> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1.Նոր Հաճն քաղաքային համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում համաձայն հավելվածի /Հավելվածը կցվում է/:

2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ,գլխավոր հաշվապահ Ս.Բադալյանին կատարելնախահաշվի համապատասխան փոփոխություններ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝ **ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

2020թ. սեպտեմբեր 16
ք.Նոր Հաճն

Հավելված
Նոր Հաճն համայնքի
ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 16-ի
N 186 որոշման

ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ

(հազար դրամ)

Հ/Հ	Եկամուտներ, ծախսեր				Հաստատված գումարը	ավելացում /+/ պակասեցում /-/	Փոփոխված գումարը
	Գործառնական դասակարգում		Տնտեսագիտական դասակարգում				
	Անվանումը	Ծածկագիրը	Անվանումը	Հոդվածը			
	ԾԱԽՍԵՐ						
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	01.06.01	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	500,0	-500,0	0,0
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	01.06.01	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	0,0	500,0	500,0
3	Նոր Հաճն գործադիր	01.01.01	Մասնագիտական ծառայություններ	4241	1500,0	-760,0	740,0
4	Սոցիալական հատուկ արտոնություններ	10.07.01	Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	2000,0	260,0	2260,0
5	Սոցիալական հատուկ արտոնություններ	10.07.01	Այլ նպաստներ բյուջեից	4729	3500,0	500,0	4000,0

Համայնքի ղեկավար Գ. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 բ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2020 թվականի N 187

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՏԱԹԵՎ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԵՎ ԳՈՌ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ և 37-րդ հոդվածների, Ընտանեկան օրենսգրքի 134-րդ, 135-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Տոռոզյան փողոցի 12 շենքի թիվ 28 բնակարանի բնակչուհի Հայկանուշ Ոսկանյանի դիմումը՝ իր հորեղբոր երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած անչափահասներ՝ Տաթև և Գոռ Ոսկանյանների նկատմամբ հոգաբարձություն սահմանելու և իրեն հոգաբարձու նշանակելու մասին, հաշվի առնելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1 նիստի արձանագրությունը և երեխաների լավագույն շահերը՝ ***որոշում եմ.***

1. Անչափահասներ Տաթև Ոսկանյանի /ծնված 23.01.2003թ./ և Գոռ Ոսկանյանի /ծնված 03.06.2005թ./ նկատմամբ սահմանել հոգաբարձություն և հոգաբարձու նշանակել Հայկանուշ Ոսկանյանին /ծնված 26.04.1991թ./:

2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել հսկողություն Հայկանուշ Ոսկանյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկանուշ Ոսկանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 թ. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈԶՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2020 թվականի N 188

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՀԱՅԿ ՎԱԽԹԱՆԳԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նոր Հաճն համայնքի Պարգևաշեն փողոցի 4-րդ թաղամասի 1-ին փողոցի 1-ին տան բնակչուհի Կարինե Էդուարդի Ավագյանի դիմումը՝ իր անչափահաս որդու՝ Հայկ Վախթանգի Մարգարյանին /ծնված՝ 19.08.2014թ/, հաշվառված՝ Պարգևաշեն փողոցի 4-րդ թաղամասի 1-ին փողոցի 1-ին տանը, համասեփականության իրավունքով պատկանող Գետամեջ համայնքում գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողը օտարելու թույլտվություն տալու մասին, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1 նիստի արձանագրությունը, ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 39 հոդվածի 2-րդ մասի, Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով, **որոշում եմ.**

1. Թույլատրել Կարինե Էդուարդի Ավագյանին, /ծնված 18.09.1977թ./ որպես անչափահաս Հայկ Վախթանգի Մարգարյանի օրինական ներկայացուցիչ, օտարելու Գետամեջ համայնքում գտնվող, համասեփականության իրավունքով Հայկ Վախթանգի Մարգարյանին պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահողը /կադ.ծածկագիր՝ 07-025-0203-0036/, Պարգևաշեն փողոցի 4-րդ թաղամասի 1-ին փողոցի 1-ին տունը ջեռուցելու նպատակով:

2.. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Էդուարդի Ավագյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՆ,ՏՈՌՈՉՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 189

18-ը սեպտեմբերի 2020թ.
Ք. Նոր Հաճն

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ի՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 29-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով մասնագիտական առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1. Սեպտեմբերի 21-ի՝ Հայաստանի Հանրապետության Անկախության 29-ամյակի միջոցառման կազմակերպման և անցկացման համար հատկացնել համայնքի 2020 թվականի բյուջեի գործառական դասակարգման 08.2.4 <Այլ մշակութային կազմակերպություններ> հատվածի տնտեսագիտական դասակարգման 4239 <Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ> հոդվածից 37000 դրամ:
2.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ, գլխավոր հաշվապահ Ս.Բաղալյանին ապահովել միջոցառման ֆինանսավորումը՝ ըստ հաստատված նախահաշվի:
3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքիղեկավարի օգնական Ա.Օհանջանյանի վրա:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

18-ը սեպտեմբերի 2020թ
Ք.Նոր Հաճն